«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»

ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	**Նախաայբբենական փուլի կազմակերպման նպատակներն ու իրականացման ուղիները**
ԱՌԱՐԿԱ	**Դասվար**
ՀԵՂԻՆԱԿ	**Էլմիրա Չախալյան**
ՄԱՐԶ	**Արագածոտնի մարզ**
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	**Ապարանի Հ. Ոսկանյանի անվան թիվ 2 հիմնական դպրոց**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ---------- 2

2. ԳԼՈՒԽ 1 ---------- 3

3. ԳԼՈՒԽ 2 ---------- 6

4. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ-ԱՌԱՋԱՐԿՆԵՐ ---------- 17

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ ---------- 18

Ներածություն

Հայտնի է, որ յուրաքանչյուր ժողովրդի մշակույթն ու դպրոցը իրենց սկիզբն առնում են ազգային գրերի ստեղծումից և ուսուցումից: Այս առումով մանկա- վարժական գիտություններից ամենահինը մայրենի լեզվի մեթոդիկան է, իսկ այստեղ ամենահինը գրաճանաչության ուսուցման բաժինն է:

Հարկ է նշել, որ մայրենի լեզվի մեթոդիկան, որպես ինքնուրույն գիտություն, ձևավորվել է միայն 19-րդ դարի երկրորդ կեսին: Այն կիրառական գիտություն է, որը մեծ զարգացում է ապրում: Գիտության աննախընթաց զարգացումը, ուսուցման մասսայական բնույթը, կյանքին կողմից դպրոցի առջև դրված բոլորովին նոր խնդիրները զգալի կերպով արագացրին ու փոխեցին մասնավոր մեթոդիկաների, ուրեմն և մայենի լեզվի մեթոդիկայի զարգացման ընթացքն ու ուղղությունը:

Մայրենի լեզվի մեթդիկայի հետագա մշակումն ու զարգացումն ընթացավ ըստ ուսուցման առանձին օղակների՝ տարրական, թերի միջնակարգ և միջնակարգ: Մեթոդիկայի տարաբաժանումն ըստ ուսուցման տարբեր օղակների կամ շրջանների պայմանավորված էր ուսուցանվող նյութի ծավալով, աշակերտների տարիքային և հոգեբանական առանձնահատկություններով և դրանցից բխող մանկավարժական ու մեթոդական նոր ձևերի ու եղանակների կիրառումով:

Վերջին շրջանում հանդես եկող ճյուղային մեթոդիկաները, ինչպիսին են գրաճանաչության, քերականության ուսուցման բացատրական ընթերցանության և այլ համանման մեթոդիկաները, մայրենի լեզվի մեթոդիկայի հետագա զարգացման այդ նոր ուղղության արդյունքն են:

Հիմք ընդունելով մանկավարժական տեսությունն ու պրակտիկան, երեխաների տարիքային հոգեբանությունն ու կազմաբնախոսական առանձնահատկությունները, ժամանակակից հայոց լեզվի օրինաչափություններն ու կրթության փիլիսոփայությունը՝ մեթոդիկան առաջարկում է երեք խնդիրների լուծման ուղիներ.

ա) ի՞նչ սովորեցնել,

բ) ինչպե՞ս սովորեցնել

գ) ինչու՞ հենց այդպես և ոչ մեկ այլ կերպ

Հայոց լեզվի տարրական ուսուցման սույն մեթոդիկայի բաժիններն են.

1. Գրաճանաչության մեթոդիկա
2. Բացատրական ընթերցանության մեթոդիկա
3. Քերականության ուսուցման մեթոդիկա
4. Խոսքի զարգացման մեթոդիկա

Գլուխ1

Նախաայբբենական շրջանի հիմնական խնդիրները

Գրաճանաչության ցանկացած համակարգում, անկախ հայեցակարգային դիրքորոշումից, ընտրված մեթոդներից, գրեթե առանց բացառության առանձնացվում է հատուկ նախապատրաստական փուլ: Այն տառուսուցմանը նախորդող ինքնատիպ խթանման բազմաբաղադրիչ փուլ է, որն ունի գրաճանաչության շրջանի բովանդակությամբ և մեթոդներով, առաջին դասարանցիների տարիքային առանձնահատկություններով պայմանավորված որոշակի խնդիրներ, որոնք մշակվել են ուսուցման այդ փուլի մանկավարժահոգեբանական ուսումնասիրությունների արդյունքների վրա:

Գրաճանաչության նախաայբբենական շրջանի հիմնական խնդիրները կարելի է բաժանել երկու խմբի՝ կազմակերպական և ուսումնական:

Կազմակերպական խնդիրներ

1. Երեխաներին ծանոթացնել նրանց համար նոր՝ ուսումնական գործունեության հետ.
   - ուսուցչի ծանոթությունը աշակերտների հետ,
   - ծանոթություն դպրոցական կյանքին և կարգուկանոնին,
   - ծանոթություն աշակերտների իրավունքներին և պարտականություններին,
   - սովորեցնել ճիշտ նստել, ձեռք բարձրացնել, խոսելիս կամ պատասխանելիս անհրաժեշտության դեպքում կանգնել,
   - մշակել բարձրաձայն և հստակ պատասխանելու կարողություն,
   - սովորեցնել լսել ուսուցչի խոսքը և կատարել հանձնարարությունները,
   - սովորեցնել լսել ընկերների պատասխանները և արձագանքել դրանց,
   - սովորեցնել գրքից և գրենական պիտույքներից օգտվելու և դրանց նկատմամբ խնամքի կանոնները:
2. Հարմարեցում դպրոցական ուսումնական գործունեությանը (ադապտա- ցիա):

Ուսումնական խնդիրներ

1. Ուսումնական գործունեությունը աշակերտների պատրաստականության մակարդակի բացահայտում*:*

Այս խնդրի ուսումնասիրությունը ուսուցիչն սկսում է մինչև ուսումնական տարվա սկսելը երեխաներին դպրոց ընդունելու օրվանից: Երեխաների լեզվական պատրաստվածության մակարդակի ուսումնասիրությունը կարևոր նյութ է տալիս ուսուցչին գրաճանաչությունը մեթոդապես ճիշտ կազմակերպելու համար: Ծանոթությունը իրականացվում է աշակերտների հետ կազմակերպվող ակտիվ զրույցի միջոցով: Արդյունքներն ամփոփելու համար ուսուցիչը պիտի իր համար պարզի յուրաքանչյուր աշակերտի՝

ա) կարդալու կարողությունների մակարդակը,

բ) գրելու կարողությունների մակարդակը,
գ) հնչյունային վերլուծական կարողությունները,
դ) բանավոր կապակցված խոսք,
ե) խոսքի շարահյուսական կառույցը:

2. Նախաայբբենական շրջանում աշակերտների կողմից ձեռք բերվող գիտելիքների, կարողությունների և հմտությունների սահմանները:

Գրաճանաչության ուսուցման նախաայբբենական շրջան

Ինչպես ամեն մի աշխատանք, այնպես էլ գրաճանաչության ուսուցումը, բնականաբար, կարող է և պետք է ունենա իր կենսագործման ժամանակամիջոցը:

Գրաճանաչության ուսուցման ժամանակի տևողությունն իրականում կախված է մի շարք գործոններից՝ ուսուցչի մանկավարժական վարպետությունից, դպրոց գալու համար երեխաների նախապատրաստվածության աստիճանից, աշակերտների ըմբռնման մակարդակից և այլ հանգամանքներից:

Առաջին հանդիպումը պիտի սկսել իբրև ծանոթություն:

Ծանոթությունը կարևոր հանգամանք է: Անծանոթ միջավայրում մարդն անապահով է զգում իրեն, հետևաբար պիտի այս աշխատանքն այնպես կազմակերպել, որ հնարավորության սահմաններում երեխաներն իրար մասին շատ բան իմանան: Ծանոթությունը պիտի իրականացնել այնպես, որ երեխաներն զգան՝ իրենք բոլորը իրար շատ նման են, ունեն ընդհանուր հետաքրքրություններ. սիրում են խաղալ, ուրախանալ, կարդալ, գրել, նկարել և այլն: Այսինքն՝ նմանությունը դնում է հավասարության նշան, բացառում է գերակայությունը՝ բոլորին տալով նույն իրավունքները և պարտականությունները:

Ըստ ուսուցման աշխատանքի կազմակերպման մեթոդամանկավարժական առանձնահատկությունների, ուսուցման խնդիրների ու հետապնդած նպատակների գրաճանաչության ուսուցման ամբողջ ժամանակը բաժանվում է երեք հիմնական շրջանների՝ նախաայբբենական կամ նախապատրաստական, այբբենական կամ գրուսուցման և հետայբբենական: Այս շրջաններից յուրաքանչյուրն ունի իր խնդիրները, աշխատանքի կազմակեպման յուրահատուկ ձևերն ու եղանակները: Գրուսուցման նախաայբբենական շրջանի հիմնական նպատակը երեխաներին միասնական կոլեկտիվի մեջ կազմակերպելու և գրել ու կարդալ սովորելու համար նրանց հոգեբանորեն ու ֆիզիկապես նախապատրաստելն է: Ուսումնական ծրագրով նախապատրաստական շրջանին հատկացվել է փոփոխական ժամանակա- հատվածներ: Տևողության այս տարբեր ժամկետների առկայությունը պայ- մանավորված է քաղաքային և գյուղական դպրոցների, մանկապարտեզներից ու ընտանիքներից դպրոց եկած երեխաների դպրոց ընդունվելու համար պատրաստ- վածլինելու աստիճանի ու բարբառային միջավայրի տարբերություններով, որոնք որոշակի կերպով

ազդում են գրաճանաչության ուսուցման ճիշտ կազմակերպման ու դրա արդյունավետության վրա:

Որոշ դպրոցներում այս հարցին հարկ եղած ուշադրություն չեն դարձնում և դասերն սկսելու հենց առաջին օրից անցնում են գրաճանաչության ուսուց ման երկրորդ շրջանին՝ տառերի ուսուցմանը, որովհետև առայժմ հնարավոր չէ նախապատրաստական շրջանը ո՛չ վերացնել, ո՛չ էլ ձուլել գրուսուցման շրջանի հետ: Նախապատրաստական շրջանը գրուսուցման համար անհրաժեշտություն է:

Գրուսուցման նախապատրաստական շրջանը ոչ միայն անհրաժեշտ, այլև խիստ կարևոր է բոլոր դպրոցների ու բոլոր առաջին դասարանների համար,

որովհետև հետագա աշխատանքի ամբողջ հաջողությունը մեծ չափով կախված
է նաև աշակերտների լավ նախապատրաստված լինելուց, այնինչ երեխաների մի մասն առայժմ դպրոց է գալիս չնախապատրաստված:

Գրուսուցման նախապատրաստական շրջանի համար բնորոշ են հետևյալ հիմնախնդիրները.

- աշակերտների ծանոթացումը դպրոցական կարգ ու կանոնին,
- երեխաների խոսքի զարգացումը, տեսողության, լսողության և ուշադրության մշակումը,
- գրելու համար ձեռքի նախապատրաստումը,
- աշխարհաճանաչողական տարրական տեղեկությունների հաղորդումը, աշակերտների ուսումնասիրումը,
- դասարանական կոլեկտիվի ստեղծումը և այլն:

Ծանոթանալիս առաջինը ներկայանում է ուսուցիչը՝ պատմելով իր մասին թե՛ իբրև ուսուցիչ, թե՛ իբրև անձ: Նշում է՝ ինչ է սիրում, ինչ չի սիրում(բնականաբար՝ երեխաներին մատչելի մակարդակով), պատմում է իր աշակերտական տարիների, իր կրթության, իր հետաքրքրությունների մասին: Սա ոչ միայն միանգամից երեխաների մեջ խաղաղություն է տարածում, այլև տալիս է խոսքի նմուշ. Ինչպես պետք է իրենք ներկայանան և պատմեն իրենց մասին: Բնականաբար, կլինեն երեխաներ, ովքեր կհրաժարվեն պատմել, խոսել: Այսպիսի երեխաներին առաջին օրը պետք չէ պարտադրել: Սովորաբար առաջին օրվա առաջին դասին նստում են նաև որոշ ծնողներ, տատիկներ կամ ընտանիքի այլ անդամներ: Ծանոթության գործընթացին շահեկան է մասնակից դարձնել նաև նրանց՝ խնդրելով ներկայանալ, պատմել, թե ովքեր են իրենք:

Հարցազրույցի մոտավոր բովանդակությունը.

1. Երեխանե՛ր, ձեզ դուր եկա՞վ մեր դասարանը:
2. Դուք ինչպիսի՞ն էիք պատկերացնում այն:
3. Այն նմա՞ն է ձեր պատկերացրածին:
4. Ի՞նչ կուզեիք, որ դասարանում լիներ, որն այժմ չկա:

5. Ձեր ինչի՞ն է պետք այն:
6. Իսկ ի՞նչ է պետք ձեզ դպրոցում դասի ժամին:
7. Ի՞նչ պիտի անեք թվարկված իրերով:
8. Ի՞նչ կա ձեր պայուսակներում: Ինչո՞ւ եք բերել դրանք:

Հարցազրույցի ժամանակ պետք չէ խոսել այն մասին, թե ինչ չի կարելի անել, ինչն է անթույլատրելի, դատապարտելի: Ավելի լավ է ասել, թե ինչն է կարելի: «Չիկարելիները» կարող են երեխաների մեջ միանգամից բացասական արձագանք առաջացնել:

Այս աշխատանքներից ամեն մեկը յուրովի, տարբեր տիպի պարապմունքների մի ամբողջ համակարգ է կազմում, սակայն առանձին ու անկախ հանդես չի գալիս. հնարավոր չէ ասել, թե երբ է ավարտվում մեկը և երբ է սկսվում մյուսը, որովհետև դրանք խորապես միմյանց մեջ ներթափանցված,փոխադարձորեն միմյանց լրացնող ու ամբողջացնող աշխատանքներ են:

Գլուխ 2

Գրաճանաչության նախաայբբենական շրջանի դասերին ներկայացվող մանկավարժամեթոդական պահանջները

Գրաճանաչության նախաայբբենական շրջանի պարապմունքները կառուցվում են՝ հաշվի առնելով դպրոց նոր ընդունված երեխաների տարիքային առանձնահատկությունները. մասնավորված ուշադրության և հիշողության առանձնահատկությունները. երեխաները երկար ժամանակ չեն կարող, զբաղվել միևնույն գործողությամբ, արագ հոգնում են և այլն: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է նրանց գործունեության ձևերը փոխել յուրաքանչյուր 10 – 15 րոպեն մեկ՝ դասի յուրաքանչյուր փուլում պարապմունքն իրականացնելով դասի ընդհանուր պլանին ու նպատակին համապատասխան: Աշխատանքը դասի ժամանակ կազմակերպվում է այնպես, որ զրույցներն ու պատմություններն ընդհատվեն երեխաների ակտիվ գործունեությամբ, այդ թվում՝ ֆիզիկական վարժություններով:

Դասերի ժամանակ նախատեսվում են հետաքրքրաշարժ և խաղային պահեր. հանելուկների գուշակում, հեքիաթների պատմում, դրանց բեմադրում, ազատ կամ թեմատիկ նկարչություն, երգ, պար, ռիթմիկա և այլն:

Գրաճանաչության նախաայբբենական շրջանում իրականացվող աշխատանքի բովանդակությունը

Այս շրջանում աշակերտները յուրացնում են գրաճանաչության ուսուցման արդյունավետության համար կարևոր լեզվական մի շարք հասկացություններ՝ գործնականորեն նախապատրաստվելով կարդալու և գրելու գործընթացին:

<u>Ամբողջական պատմություն կամ խոսք</u>: Ուսուցիչը երեխաների համար պատմվածքներ ու հեքիաթներ պատմելիս ու կարդալիս, թեմատիկ նկարների բո- վանդակության մեջ առաջընթաց չի ապրի: Իսկ փոքրիկ դպրոցականներին նոր, անծանոթ միջավայրում խոսեցնելը դժվար է: Այդ դժվարության հաղթահարման համար անհրաժեշտ է ստեղծել բարենպաստ մթնոլորտ՝ ազատություն, անկաշ- կանդություն, հանդուրժողականություն, սեր և գուրգուրանք: Սրանց առակայության դեպքում փոքրիկն իրեն ապահով կզգա, իսկ ապահովությունը նրան կտա ազատ մտածելու և առանց վախի արտահայտվելու հնարավորություն:

Նախաայբբենական շրջանում ուսուցչի պատմությունը պետք է՝

ա) հնչի հանդարտ, պարզ, երեխաներին ընկալելի ոճով,

բ) կազմված լինի 3-4 նախադասությունից,

գ) նախադասությունները կազմված լինեն 2-3 բառից,

դ) նախադասությունների կազմի մեջ մտնող բառերը վերցված լինեն երեխաների ակտիվ բառապաշարից,

ե) խոսքը պետք է զուգորդվի ցուցադրումներով:

<u>Գաղափար նախադասության մասին</u>: «Նախադասություն» քերականական հասկացությունը երեխաներին պետք է ընկալել տալ որպես խոսքի մի ամփոփ միավոր՝ առանց սահմանումների:

Թեմատիկ նկարների շուրջ պատմություն հյուսելուց, ազատ, ինքնուրույն խոսք կառուցելուց հետո պիտի մշակել հարցերի օգնությամբ նախադա- սությունները պատմությունից առանձնացնելու ունակություն: Բնականաբար, երե- խաների համար միանգամից դժվար է զգալ պատմության կազմի մեջ մտնող նախադասությունների սահմանները: Այդ պատճառով ուսուցիչը դանդաղ, նախա- դասություն առ նախադասություն պետք է ներկայացնի պատմությունը: Այնու- հետև հաշվել է տալիս, թե տվյալ պատմությունը քանի մասից է կազմված: Որից հետո պետք է բացատրվի, որ այդ մասերից յուրաքանչյուրը պատմության մեկ մասն է և պատմության բովանդակության հետ կապված մեկ միտք է արտահայտում:Ապա միտք բառի փոխարեն երեխաները սովորում են օգտագործել նախադասություն բառը և գծել նախադասության գծապատկերը. :

Երեխաներին պետք է բացատրել, որ ամեն մի առանձին, նոր սկսվող միտք՝ նախաասություն, պետք է սկսել մեծատառով գրել, և գծապատկերի վրա ցույց տալ, թե ինչպես է այդ նշվում (գծապատկերի սկիզբը մի փոքր հոծ գծով և բարձր է տրվում): Երեխաների ուշադրությունը պիտի հրավիրել նաև գծապատկերի վերջում դրված երկու կետերին , որոնք նշանակում են, որ միտքն ավարտված է, նախադասությունը վերջ[redacted]ում ենք **վերջակետ**:

Այսպիսով աշակերտներն իմանում են, որ ամեն մի պատմություն կազմված է նախադասություններից: Նախադասությունը սկսվում է մեծատառով և վերջում դրվում է վերջակետ:

[redacted] :

<u>Գաղափար բառի մասին</u>: Հենց նախադասությունն էլ բաղադրիչների վերլուծելու միջոցով, երեխաներին գաղափար պետք է տալ նաև բառի մասին, որպեսզի բառը նախ ընկալվի որպես նախադասության բաղադրիչ մաս և ապա նոր որպես որևէ կոնկրետ իմաստ արտահայտող առանձին լեզվական միավոր:

Բառի մասին գաղափար տալու և տրված հասկացությունը ամրապնդելու համար կարելի է բազմաթիվ և բազմապիսի վարժություններ կատարել: Շատ օգտակար պետք է համարել տարբեր բնույթի բառերից բառախմբեր կազմելու աշխատանքը. օրինակ՝ մրգեր, գործիքներ, ընտանի կենդանիներ, վայրի կենդանիներ, թռչուններ,հագուստներ, ծաղիկներ …

Նման աշխատանքը ոչ միայն ամբողջացնում է ու ամրապնդում բառի մասին երեխաների իմացածը, այլև նպաստում է բառապաշարի հարստացմանը, աշխարհաճանաչողության սահմանների ընդարձակմանն ու տրամաբանական մտածողության զարգացմանը:

Բառի մասին գաղափարը նույնպես տրվում է գծապատկերների օգնությամբ: Ուսուցչուհին արտասանում է մի նախադասություն, գրատախտակին գծում է այդ նախադասության գծապատկերը: Այնուհետև երեխաներին առաջարկում է հաշվել, թե քանի մասից է կազմված այդ նախադասությունը:

(Օրինակ՝ Աղավնին ճախրում է երկնքում:)



Ուսուցչուհին դանդաղ, դադարներով արտասանում է նախադասությունը: Ուսուցչուհու օգնությամբ որոշում են, թե քանի մասից է կազմված նախադասությունը: Այնուհետև մաս բառը փոխարինվում է բառով: Իբրև բառ ներկայացվում է նաև **է** օժանդակ բայը:

Բառի մասին երեխաների ունեցած գիտելիքներն ամրակայելու, նախադա-

սության կազմի մեջ մտնող բառերի տեղը գտնելու, դրանց քանակը հաշվելու կարողությունների ձևավորման նպատակով անհրաժեշտ է կատարել տարաբնույթ վարժություններ: Մասնավորապես անհրաժեշտ է ձևավորել նախադասության բառային գծապատկերի նախադասություններ կազմելու կարողությունները:

<u>Գաղափար վանկի մասին</u>: Վանկի մասին գաղափար կարելի է տալ բառի մասին տրված իմացության և հենց բառի միջոցով:

Դրա համար նպատակահարմար է վերցնել 3-4 տիպի բառ-նկարներ՝ տարբեր վանկային կառուցվածքով (միավանկ, երկվանկ, եռավանկ) և դրանք

հերթով կարդալով նախ զգալ տալ, թե ինչ տարբերություն կա դրանց միջև, ապա՝ յուրաքանչյուր խմբի բառերը քանի մասից են կազմված:

Սկզբնական շրջանում ուսուցիչը բառը արտասանում է առանց վանկերի բաժանելու, ապա՝ վանկերի բաժանելով: Յուրաքանչյուր առարկայի անունը երեխաներին արտասանել տալուց հետո, այն արտասանում են ծափ տալով՝ այն բաժանում են մասերի և հաշվում մասերի քանակը: Երեխաները գալիս են այն համոզման, որ շրջապատում կան առարկաներ, որոնց անունները կարելի է արտասանել մեկ ծափով, երկու ծափով և այլն:

Նրանց պետք է բացատրել, որ այդ ծափերի թիվը պայմանավորված է բառերի մասերի քանակով:



Սկզբում բառի մեջ եղած այդ ինքնուրույն միավորները կարելի է անվանել մասեր, որովհետև այդ բառն ավելի լավ է արտահայտում նրանց էությունը և հեշտ է հասկացվում երեխաների կողմից: Իսկ հետագայում, երբ բառի մեջ եղած այդ ինքնուրույն միավորների վերաբերյալ երեխաները որոշակի գա- ղափար կկազմեն, կկարողանան տրված բառը մասերի բաժանել, ասել, թե այն քանի մասից է կազմված, արդեն կարելի է տալ նաև իսկական տերմինը՝ ասել, որ բառի այդ մասերին անվանում ենք **վանկ**: Վանկի մասին տրված գաղա- փարի ամրապնդմանը կարող են նպաստել նաև առարկայական նկարների շուրջ կատարվող դասդասումները, վանկային վարժությունները կամ վանկախաղերը:

Այսպես, օրինակ `

1. Ուսուցիչը կամ երեխաներից մեկը ասում է երկվանկ կամ եռավանկ բառի մի մասը, իսկ խաղակիցը լրացնում է մյուս մասը, և ստանում բառ: Եթե խաղընկերը կարողանում է այդ անել, ապա խաղը նրա հետ շարունակվում է մինչև նրա խաղից դուրս գալը կամ խաղի ղեկավարի կողմից նրան փոխելը, իսկ եթե չի կարողանում անմիջապես լրացնել բառը, խաղից դուրս է մնում, և նրան փոխարինում է հաջորդ խաղացողը:
2. Ուսուցիչը կամ խաղացողներից մեկը ասում է միավանկ, երկվանկ կամ եռավանկ բառ, խաղակիցը պետք է անմիջապես համանման մի այլ բառ ասի: Եթե չի կարողանում, նրան փոխարինում է հաջորդ խաղացողը:

<u>Գաղափար հնչյունի մասին</u>: Վանկից հնչյունին անցնելը բավականաչափ հեշտանում է, քանի որ երկարաձգված կամ դանդաղ արտասանության ժամանակ բառի մեջ արդեն որոշակի կերպով լսվում են բոլոր հնչյունները, և երեխաները պարզորոշ կերպով կարողանում են լսել ու անջատել առանձին հնչյունները: Սակայն այս հարցում խիստ զգույշ պետք է լինել, որովհետև շատ հաճախ այդ հեշտ ընկալելը խաբուսիկ է լինում: Հնչյունի ճիշտ և կայուն ընկալման համար երկարատև ու համառ

աշխատանք պետք է տանել: Այս տեսակետից չափազանց օգտակար են հնչյունային վարժությունները:

Այդ նպատակով պետք է անցնել այնպիսի բառեր, որոնցում գաղտնավանկ չկա, իսկ վանկերը հիմնականում պարզ բաց վանկեր են (մա, մու, մի, սա, սու, սի, սե, տա, տու, տի ….), որոնցում երկու հնչյուններն էլ հստակ ու երկար են հնչում և բաղաձայնը չի խլանում:

Դա հնարավորություն է տալիս հնչյունները պարզ ու որոշակի լսելու և միմյանցից առանձնացնելու: Նույն բանը չի կարելի անել, օրինակ, պարզ փակ վանկերի դեպքում (աբ, աս, ուն, ագ, իգ, …), որովհետև այստեղ ձայնավորը շատ կարճ է հնչում, իսկ բաղաձայնը խլանում է, և երկու հնչյունների միաձուլումը կատարվում է ակնթարթային արագությամբ, ուստի հնարավոր չէ դրանք միմյանցից առանձնացնել առանց բառի կամ վանկի կառուցվածքը քայքայելու:

Ուսուցչի հանձնարարությամբ երեխաներն ասում են միավանկ բառեր: Ուսուցիչը դրանից ընտրում է և գրատախտակին գծում այն բառերի գծապատկերները, որոնք թեև միավանկ են, բայց ունեն տարբեր քանակի հնչյուններ (օրինակ ուլ, շուն, տուն և այլն): Բնականաբար, դրանց հնչյունային գծապատկերները տարբեր կլինեն:



Ինչու՞ են այս բառերի գծապատկերները տարբեր, չէ՞ որ դրանք արտասանվեցին մեկ շնչով, այսինքն բոլորն էլ միավանկ են:

Որպես կանոն, այս հարցին երեխաները չեն կարող պատասխանել: Ուսուցչուհին դարձյալ արտասանում է նույն բառերն այնպես ընդգծված, որ նրանց կարճ և երկար արտասանությունից երեխան կռահի, իսկ եթե չեն կռահում, կարելի է բացատրել, որ բառերը երկար են կամ կարճ, կապված այն բանի հետ, թե նրանց մեջ հնչող ձայների թիվը մե՞ծ է, թե՞ փոքր:

Ուսուցիչը արտասանում է բառեր, հանձնարարում է ասել, թե ի՞նչ է հնչում բառի սկզբում, ի՞նչ է հնչում բառի վերջում, ի՞նչ է հնչում բառի մեջ:

Անընդհատ պիտի օգտագործել հնչյուն բառը (լսել բառի հետ միասին), որպեսզի երեխաներն ընտելանան բառին, մտապահեն ՝ հետագայում հնչյուն բառը հնչումից բխեցնելու համար:

Կարևոր է այն հանգամանքը, որ երեխաների ուշադությունը կենտրոնացվի նախ բառասկզբի հնչյունի, ապա ՝ բառավերջի, հետո՝ բառամիջի հնչյունի վրա, որովհետև ուսումնասիրությունները ցույց են տվել, որ նրանք ամենից հեշտ լսում

են բառասկզբի հնչյունը, ապա ՝ բառավերջինը, հետո նոր ՝ բառամիջինը: Ընդ որում, պիտի ընտրել նախ երկու հնչյուն ունեցող բառեր, ապա ՝ եռահնչյուն և այլն:

<u>Գաղափար ձայնավոր և բաղաձայն հնչյունների մասին</u>: Երբ երեխաները կսովորեն բառի մեջ լսել և ճանաչել առանձին հնչյունները, գիտակցել դրանք, կարելի է գաղափար տալ ձայնավոր և բաղաձայն հնչյունների մասին: Հնչյունների այս տարբերակումը կարելի է կապել ձայների տևողության հետ, որպես երկար և կարճ արտասանվող հնչյուններ: Այն հնչյունները, որոնք հնարավոր է երկար արտասանել, կոչվում են **ձայնավոր հնչյուններ,** իսկ նրանք, որոնք կարճ են արտասանվում կամ հնարավոր չէ երկար արտասանել, կոչվում են **բա ղաձայն հնչյուններ**:

Ձայնավոր և բաղաձայն հնչյունները երեխաները պետք է սովորեն տարբերակել գործնական ճանապարհով: Այս նպատակով կատարվում է որևէ բառի հնչյունային վերլուծություն (օրինակ՝ սար): Ուսուցուհին արտասանել է տալիս այն հնչյունը, որ լսվում է բառասկզբում: Երեխաները երկար արտասանելուց հետո «հայտնաբերում են », որ **ա** հնչյունը երկար արտասանելուց հետո « կորչում է », և լսվում է **ը**: Նույն ճանապարհով նրանք նկատում են, որ այդպես է լսվում նաև **ր** հնչյունը:

Իսկ հետո արտասանել է տալիս այն հնչյունը, որը լսվում է բառամիջում՝ **ա՛**: Երեխաները նկատում են, որ **ա** -ն երկար է արտասանվում և լսվում է մինչև վերջ: Այսպիսի աշխատանք կատարվում է մի քանի միավանկ բառերի շուրջ՝ խորացնելով բացատրությունը:

Ամփոփելիս, ուսուցչուհին բացատրում է, որ **ա** արտասանելիս ինչպես նկատեցինք,

օդը բերանից դուրս է գալիս առանց արգելքի: Իսկ **ս** կամ **ր** արտասանելիս ձայնն արգելքով է բերանից դուրս գալիս: Արտասանվող բառի հնչյունները

լսելու, առանձնացնելու, դրանց տեղը բառի մեջ որոշելու ունակությունների ձևավորումը և դրանց հմտության վերածումը ոչ միայն կարդալու ուսուցման գործընթացի արդյունավետության բարձրացման կարևոր պայման է, այլև որքան երեխաների հնչյունային լսողությունը զարգացած է, այնքան կարդալիս և գրելիս նրանք քիչ սխալներ թույլ կտան, չեն շփոթի կամ աղավաղի բառի գրությունը:

Բառի հնչյունային վերլուծությունը կարելի է իրականացնել հետևյալ ձևերով.

1. Երեխան արտասանում է բառը՝ ցույց տալով բառի գծապատկերը:

Կարդալ չիմացող, տառերն անգամ չճանաչող երեխայի համար սա բավականին բարդ գործողություն է, որովհետև նա ոչ թե արագ պիտի արտասանի բառը՝ ձեռքը սահեցնելով գծապատկերի վրայով, այլ պիտի ցույց տա հատկապես այն վանդակը, որին համապատասխանող հնչյունն ինքն արտասանում է: Բնականաբար շահեկան է առաջին վարժությունները կատարել երկհնչյուն, եռահնչյուն բառերի շուրջ, իսկ հետագայում կարելի է աստիճանաբար ավելի բազմահնչյուն բառեր ընտրել:

2. Բառի մեջ հնչյունի առանձնացում ձայնի բարձրությամբ: Երեխաների այս կարողությունը ձևավորելու համար նախ ուսուցիչը պիտի տա խոսքի օրինակ՝ դարձյալ ընտրելով եռահնչյուն բառեր: Բառի հնչյունային վերլուծության ժամանակ պիտի որոշել, թե որ հնչյունը պետք է առանձնացնել, հնչեցնել ընդգծված, երկար և առանձնացված, կրկնել այդ հնչյունը: Օրինակ, եթե **արի** բառի մեջ առանձնացնել **ա** հչյունը, պետք է արտասանել **ա – ա –րի**, իսկ եթե **ր** հնչյունը՝ **ա-ր-ր-րի**, եթե **ի** հնչյունը՝ **արի-ի-ի**: Պարզ է, որ բառի այսպիսի արտասանությունը երեխայի համար անբնական է, խորթ, անսովոր, հետևաբար պետք է այդ գործողությունները կատարել իբրև խաղ:

3. Բառից առանձնացնել և առանձին արտասանել այն հնչյունը, որն արտաբերվում էր երկար, ընդգծված և ձայնով առանձնացվում էր, կրկնվում ա-ա-ա-ռու (ա), ա-ռ-ռ-ռու (ռ), առու-ու-ու-ու (ու):

4.Բառի հնչյունային վերլուծություն՝ գծապատկերի վրա գունավոր կավճով, (կամ տետրում՝ գունավոր մատիտներով) նշելով համապատասխան հնչյունի վանդակը: Այս աշխատանքը կատարելու համար առաջին դասարանցին պետք է կարողանա բառն արտասանել ամբողջությամբ: Պիտի նկատի ունենալ, որ այս կարողությունները, միանգամից չեն մշակվում, սակայն մինչև դրանք հմտություն չդառնան,տառաճանաչություն սկսելն անիմաստ է: Որպեսզի յուրաքանչյուր երեխայի մեջ ձևավորվի այդ հմտությունը, նա պետք է ինքնուրույն ասի բառը,

գծի գծապատկերը և գունավորի համապատասխան վանդակները: Այս գործողությունները պիտի կրկնվեն գրաճանաչության նախաայբբենական շրջանի յուրաքանչյուր դասի ժամանակ:

Պարզ է, որ նման աշխատանքը ոչ միայն կհոգնեցնի երեխաներին, այլև կձանձրացնի: Կանխելու համար այդ ձանձրույթը և աշխատանքը հոգնեցուցիչ չդարձնելու համար պիտի օգտագործել դիդակտիկ նյութեր և տարաբնույթ հնչյունային խաղեր:

Շատ կարևոր է երեխաների ուշադրությունը հրավիրել վանկատած բառերի հնչյունային գծապատկերների վրա և բերել այն համոզման, որ յուրաքանչյուր վանկի մեջ կա մեկ ներկված (կարմիր) վանդակ, այսինքն՝ մեկ ձայնավոր հնչյուն: Նշանակում է՝ յուրաքանչյուր վանկի համար անպայման ձայնավոր հնչյուն է պետք: Օրինակ օձ, տուն, կատու բառերի գծապատկերները համապատասխանաբար կլինեն.

-12-



Էեզվական այս նախագիտելիքներն, անշուշտ դյուրին չէ յուրացնելը, և ուսուցչից պահանջվում է համբերատար, մանրակրկիտ, երկարատև աշխատանք:

Գրելու նախապատրաստում

Գրաճանաչություն նախաայբբենական շրջանի կարևոր խնդիրներից է նաև գրելու նախապատրաստումը:

Այդ աշխատանքներում կարևորվում են.

ա) մատների մանր ֆալանգերի ամրացումը,

բ) ձեռքի դաստակի մարզումը,

գ) տեսողական հիշողության զարգացումը,

դ) գրելու ժամանակ հիգիենայի կանոնների պահպանումը,

ե) տետրի մեջ կողմնորոշվելու կարողության մշակումը,

զ) ուրվագծերով տրված նկարների գունավորում՝ առանց սահմաններն անցնելու

է) ձախից աջ գրության ապահովումը,

ը) հայերենի հիմնական տառամասնիկները գրելու կարողության մշակումը:

Գրուսուցում ասելով հասկանում ենք ոչ միայն տառերի ճանաչումն ու ընթերցումը, այլև սովորած տառը գրելը, նշանագրելը, տառամասնիկներն իրար հետ կապակցելով տառեր ու տառերը կապակցելով բառեր կազմելը:

Գրելու աշխատանքին երեխային նախապատրաստելու համար ամենից առաջ պետք է վարժեցնել նրա աջ ձեռքի դաստակի ու մատների մանր մկանային համակարգը:

Առանց դրա երեխան ի վիճակի չի լինի գրելու համար անհրաժեշտ նուրբ ու չափավորված շարժումներ կատարել, ձեռքի մկանները չեն կարողանա զգայական գրգիռների միջոցով ուղեղի հաղորդած տեսողական պատկերները
նույնությամբ վերարտադրել՝ պահպանելով առաջադրված տառապատկերների նմանությունը, մեծությունը, համաչափությունը, թեքությունն ու գեղեցկությունը:

Ինչպես ձեռքի մանր մկանայի համակարգի, այնպես էլ երեխաների մեջ չափ ու ձևի, տարածության ու սահմանագծի ըմբռնումը զարգացնելու համար կարևոր նշանակություն ունի պատկերների գունավորումը: Այս նպատակի համար պետք է օգտագործել երեխաներին կենսափորձից ծանոթ և հասանելի առարկաների ու բնության տեսարանների պատկերներ և դրանք գունավորել տալ ըստ իրենց բնական գույների:Դա երեխաներին սովորեցնում է ավելի լավ տիրապետել մատիտին ու գրիչին, ճիշտ պահպանել աչքաչափը՝ գծերի հավասար հեռավորությունը, ուղղությունն ու զուգահեռականությունը: Սա շատ կարևոր է գրելու ուսուցման համար՝ ինչպես տողերի ճիշտ պահպանման, այնպես էլ ձեռքի շարժումները չափավորելու, ձեռքը ձախից աջ ու աջից ձախ վարժ շարժելու, տառերի ու բառերի հեռավորության համաչափությունը պահպանելու տեսակետից:

Գրելու նախավարժություններ

Գրելու նախավարժությունների ընթացքում երեխաներին սովորեցնում ենք տառեր գրելու համար անհրաժեշտ փոքր, նուրբ ու տողերի մեջ չափավորված ուղղահայաց ու հորիզոնական գծեր քաշել,տողացանցում

քառակուսի ու եռանկյունի պարզ պատկերներ գծել, հավասարաչափ հեռավորության վրա կետեր դնել և այդ կետերը գծերով միացնել, տարբեր չափերի պարզ գծեր քաշել և այլն: Վարժությունները նախ կատարվում են կետերով, ապա նոր միայն գծերով:

Կետերը, որպես գրելու հենակետեր, որպես տողերի վրա ճիշտ կողմնորոշվելու, տառերի չափերն ու հեռավորությունը պահպանելու սահմանանիշներ, մեծապես նպաստում են երեխաների տարածական ըմբռնումների, աչքաչափի և գրելու համար անհրաժեշտ մկանաշարժողական համակարգի զարգացմանը:

Շատ կարևոր նշանակություն ունի նաև ձեռքը գրելուն նախապատրաստելու վարժությունների ծավալի և տևողության հարցը: Ամեն մի հատված գրելուց առաջ պետք է ստուգել երեխաների կեցվածքը, ձեռքի դիրքը և կատարած աշխատանքի ճշտությունը, իսկ աշխատանքը կատարելուց հետո որոշ դադար տալ, որպեսզի երեխան կարողանա նախապատրաստվել աշխատանքի հաջորդ հատվածը կատարելուն:

Նախաայբբենական շրջանում տառամասնիկների գրությունն ուսուցանում ենք, վերցնելով հայերեն տառերի բոլոր հիմնական մասնիկները և, ըստ դրանց աստիճանական բարդացման, սովորեցնում գրել:

Լեզվական նախագիտելքների ձեռքբերումն իրականացվում է երկար ժամանակահատվածում, ամենօրյա աշխատանքով, և չպետք է սպասել, որ 1-2 պարապմունքի ընթացքում ողջ դասարանը ձեռք կբերի այս գիտելիքներն ու ունակությունները:

Նախնական ունակությունների և գիտելիքների այս սահմանի ձեռքբերումը կավարտվի մինչև գրաճանաչության այբբենական շրջանի սկիզբը, այսինքն՝ մինչև առաջին տառի ուսուցման սկսվելը: Այնուհետև տառերի ուսուցման շրջանում դրանց մասին տեղեկությունները կընդլայնվեն, և այդ գիտելիքները կվերածվեն հիմնական կարողությունների:

Հնչյունային լսողության զարգացումը գրաճանաչության գործընթացի արդյունավետության ապահովման գլխավոր պայմանն է և նախաայբբենական շրջանի խնդիրներից հիմնականը:

Ի՞նչ է իրենից ներկայացնում հնչյունային լսողությունը, և ինչո՞ւ է այն կարևոր կարդալու և գրելու կարողությունների ձևավորման գործընթացում:

Բոլոր առողջ երեխաների՝ գրաճանաչության համար անհրաժեշտ հնչյունային լսողությունը հնարավոր է զարգացնել: Այլ է տարբեր արատներով պայմանավորված հնչյունային լսողություն ունեցող սովորողների խնդիրը:

Անառարկելի է, ուսուցման սկզբնական շրջանում կարողության ձևավորումը

նպատակ է, իսկ կրթության հետագա փուլերում կարդալը դառնում է գիտելիքների ձեռքբերման, այսինքն՝ ուսումնական գործունեություն ծավալելու միջոց: Սովորաբար դպրոց ընդունվող բոլոր առողջ երեխաներն ունեն լիարժեք հնչարտաբերական կարողություններ, ակտիվ բառապաշար և քերականորեն ճիշտ կառուցված խոսք, սակայն ոչ բոլորն են կարողանում լսել և առանձնացնել իրենց արտասանած բառերի հնչյունները: Վաղ ուսուցմամբ պայմանավորված՝ այդպիսի անբավարար զարգացում կարելի է նկատել ինչպես առողջ, այնպես էլ նրանց կողքին ներառական կրթության հետևանքով հայտնված ՄՀՌ ունեցող երեխաների մեջ: Ուսուցչի խնդիրն է՝ նախ որոշել հնչյունային լսողության զարգացման մակարդակի անբավարարության պատճառները, ապա նոր ձեռնարկել հատուկ համակարգված աշխատանք:

Հնչյունային լսողության անբավարար զարգացման դեպքում երեխաները սովորաբար թույլ են տալիս այսպիսի սխալներ:

ա) տառերը ճանաչում են, բայց չեն կարողանում համադրել, բառեր ստանալ ու կարդալ

բ) բաց են թողնում, բառերի վերջին տառերը կարող կամ վանկերը (ինչպես կարդալիս, այնպես էլ գրելիս)

գ) շփոթում են տառերը, վանկերը

դ) շփոթում են զ-ս, լ-ր, ձ- ծ, շ-ս և մի շարք այլ բաղաձայններ

ե) տառեր և վանկեր ավելացնում

զ) բառը կարդում են՝ գուշակելով վերջին վանկը կամ տառերը

Սովորաբար նման դեպքերում թե՛ ուսուցիչները, թե՛ ծնողները երեխաների հետ տանում են լրացուցիչ աշխատանք՝ նրանց անընդհատ կարդալ և արտագրել հանձնարարելով: Որպես կանոն՝ այս աշխատանքը ոչ միայն չի օգնում խնդրի լուծմանը և ստացվում է չնչին արդյունք, այլև երեխաների մեջ ուսման նկատմամբ անվստահություն: Մեթոդական ճիշտ աշխատանքի դեպքում ուսումնառության առաջին իսկ տարում հնարավոր է խնդիրը լուծել որոշակի վարժությունների միջոցով: Այս աշխատանքների առաջին և կարևոր պահանջը դրանց **համակարգայնությունն ու պարբերականությունն է**: Այս աշխատանքին նվիրված ժամանակը երբեք պետք չէ խնայել՝ նկատի ունենալով, որ գրաճանաչության նախապայբբենական շրջանի կարևոր խնդիրներից է հնչյունային լսողության զարգացումը, և նախատեսված աշխատանքների զգալի մասը հենց այդ նպատակին են ծառայում:

Այս կարևոր խնդրի լուծումը հիմնականում պիտի իրականացվի դիդակտիկ խաղերի միջոցով, որոնք ամենաարդյունավետ միջոցներն են, քանզի՝

Այս կարևոր խնդրի լուծումը հիմնականում պիտի իրականացվի դիդակտիկ խաղերի միջոցով, որոնք ամենաարդյունավետ միջոցներն են, քանզի՝

ա) երեխաներին սովորեցնում են կարդալ՝ դասարանում ստեղծելով ուրախ, աշխույժ, անկաշկանդ մթնոլորտ

բ) խաղը, բացի երեխաների հնչյունային լսողության զարգացումից, նաև նրանց մեջ ձևավորում է սեփական գործունեությունը կազմակերպելու, ընկերների հետ համագործակցելու ունակություններ

գ) խաղի ժամանակ ակտիվանում են երեխաների մտածողական գործունեությունը, ուշադրությունը, խոսքը, երևակայությունը

դ) միևնույն խաղը կարելի է կազմակերպել ոչ միայն բազմակի անգամ, այլև յուրաքանչյուր անգամ տարբեր նպատակներով, որի արդյունքում երեխաներն ուսումնական միևնույն նյութին կանդրադառնան բազմիցս, սակայն քանի որ յուրաքանչյուր անգամ տարբեր խաղերի միջոցով է այն կազմակերպվում, ուսումը կդառնա հետաքրքրաշարժ:

Եզրակացություն

Գրաճանաչության այբբենական շրջանն արդյունավետ իրականացնելու համար երեխաները նախաայբբենական շրջանի վերջում պետք է՝

- գաղափար ունենան պատմության, նախադասության, բառի, վանկի, հնչյունի (ձայնավոր, բաղաձայն) մասին և այդ եզրույթներն օգտագործեն խոսքում
- պարզագույն սիմվոլիկ զննականության միջոցով (գծապատկեր) կարողանան ներկայացնել նախադասությունը, բառը, վանկը, տառը
- ձայնավոր և բաղաձայն հնչյունները տարբերակեն և գունային սիմվոլի միջոցով դրանք արտահայտեն գծապատկերում
- գիտակցեն ձայնավորի դերը վանկակազմավորման գործում
- ունենան որոշակի բառապաշար և մտքերն ինքնուրույն կապակցված խոսքով ներկայացնելու (2-3 նախադասությամբ) կարողություն
- ձեռքերը նախապատրաստված լինեն գրելուն
- ունենան ներկելու, նկարելու, որոշակի գծային սահմանների մեջ հանձնարարվող գործողությունները կատարելու կարողություններ
- կարողանան գրել հայերենի տառերի պարզ մասնիկները՝ ըստ նրանց չորս տեղադրության:

Այբբենարանը ամենաբարդ դասագրքերից մեկն է, որի ճիշտ օգտագործումից մեծ չափով կախված է ոչ միայն գրաճանաչության, այլև կարդալու ուսուցման և երեխայի ընդհանուր զարգացման բնագավառում ուսուցչի ունենալիք հաջողությունը:

Իր մայրենի լեզվով խոսել, կարդալ-գրել կարող է սովորել ցանկացած առողջ երեխա: Պարզապես այդ գործընթացը կազմակերպելիս պիտի կարևորել.

- լեզուն սովորելու դրդապատճառները,
- երեխայի տարիքը,
- սոցիալական միջավայրը;

Հիշենք, որ միևնույն նպատակին հասնելու համար յուրաքանչյուր երեխայի տարբեր ժամանակ է պետք:

Ասա՛ ինձ, և ես կլսեմ, ցույց տուր ինձ, և ես կհիշեմ, մասնակի՛ց դարձրու, և ես կհասկանամ:

Օգտագործված գրականություն

1. Աշոտ Տեր – Գրիգորյան - « Գրաճանաչության մեթոդիկա »
   Երևան – 1968թ.

2. Ջուլիետա Գյուլամիրյան - « Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա » - Երևան - 2009թ

3. Վաչագան Սարգսյան - « Այբբենարան » (ուսուցչի ձեռնարկ)
   Երևան - 2012թ.

4. Ջուլիետա Գյուլամիրյան - «Զանգակ» Այբբենարանի և «Ես սովորում եմ գրել» աշխատանքային տետրերի մեթոդական ուղեցույց
   Երևան – 2014թ.

https://www.varder.net/shop/204/desc/holandakan-vard-peach-avalanche
https://www.pngwing.com/ru/free-png-inqht
http://www.stroyplan.ru/plans.php?showitem=1247